

2004 թվականի նոյեմբերի 9-ին կայացած Տեղեկատվական տեխնոլոգիաների
զարգացմանն աջակցող խորհրդի նիստի

Մասնակցում էին՝

խորհրդի անդամներ՝

- Ա. Մարգարյան - ՀՀ վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների
զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ
- Վ. Ներսիսյանց - ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր
խորհրդական, Տեղեկատվական տեխնոլոգիաների
զարգացմանն աջակցող խորհրդի փոխնախագահ
- Ա. Գրիգորյան - Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն
աջակցող խորհրդի քարտուղար
- Վ. Մովսիսյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի
գլխավոր տնօրեն
- Տ. Դավթյան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի
տեղակալ
- Հ. Ճզմարիտյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
- Ա. Ավետիսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
- Յու. Շուքուրյան - ՀՀ ԳԱԱ-ի փոխպրեզիդենտ
- Բ. Ենգիբարյան - «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի
տնօրեն
- Գ. Չուգասզյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ»
հասարակական կազմակերպության նախագահ
- Լ. Մինասյան - Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության
հիմնադրամի հայկական մասնաճյուղի գործադիր տնօրեն
- Ա. Բալդրյան - «Յունիքոմփ» ՓԲԸ-ի նախագահ
- Ռ. Վարդանյան - «Քվանտ» վարժարանի տնօրեն

հրավիրվածներ՝

- Դ. Հարությունյան - ՀՀ արդարադատության նախարար
- Ա. Մանուկյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարար

- Դ. Սանդուխյան - «Ինտերնյուս» ՀԿ ծրագրի համակարգող
- Ա. Քուչուկյան - ԵՐՄՄԳՀԻ-ի գլխավոր ինժիներ
- Ա. Վարդանյան - «Վիասֆեր» Տեխնոպարկի տնօրեն
- Հ. Հարությունյան - «ԱրմենՏել» ՀԶ ՓԲԸ-ի գործադիր տնօրենի հատուկ խորհրդական
- Ա. Ալեկսանյան - «Արմինկո» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
- Ռ. Մկրտչյան - «Վեբ» ՍՊԸ-ի նախագահ
- Ա. Հովանիսյան - «Sinergy» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն
- Ա. Շահվերդյան - «Opensource Armenia»-ի ղեկավար
- Վ. Մասերեջյան - «Վիրաժ Լոջիկ» ամերիկյան ընկերության մասնաճյուղի տնօրեն
- Մ. Հարությունյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
- Գ. Նիկողոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ
- Ս. Խանազադյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների վարչության գլխավոր մասնագետ
- Պ. Դեմիրճյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
- Լ. Դոյրոյան - «AM» ամսագրի գլխավոր խմբագիր

խորհրդի քարտուղարությունից՝

- Ա. Հայրիյան - Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ
- Ա. Թարոյան - Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող Խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին:

Ա. Գրիգորյան

2. «ԱրմենՏել» ՀԶ փակ բաժնետիրական ընկերության թիվ 60 Լիցենզիայի վերախմբագրված և լրացված տարբերակի վերաբերյալ տեղեկատվության մասին:

*Դ. Հարությունյան
Դ. Սանդուխյան
Մ. Մարկոսյան*

3. Համաշխարհային գազաթափողովի մրցանակաբաշխության շրջանակներում էլեկտրոնային բովանդակության համահայկական մրցույթի կազմակերպման մասին:

*Գ. Չուգասյան
Ա. Վալեսյան*

4. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի համակարգումն առաջնորդող մարմնի ստեղծման մասին:

*Վ. Ներսիսյան
Գ. Չուգասյան
Յու. Շուքուրյան
Ա. Քուչուկյան
Դ. Սանդուխյան*

5. Այլ հարցեր:

Օրակարգի հարցերի քննարկման արդյունքները

1.

ա) Ընդունել ի գիտություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Տ. Դավթյանի և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ Հ. Ճմարիտյանի կողմից ներկայացված տեղեկատվությունը նախորդ նիստում տրված հանձնարարականների կատարման ընդացքի մասին.

բ) ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ Հ. Ճմարիտյանին` Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2004 թվականի սեպտեմբերի 13-ի N 596-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կատարած աշխատանքների և ռադիոհեռուստատեսության բնագավառում հեռարձակման թվային

համակարգին աստիճանական անցման համար անհրաժեշտ միջոցառումների ժամանակացույցի մասին:

2.

ա) Ընդունել ի գիտություն «ԱրմենՏել» ՀՀ փակ բաժնետիրական ընկերության թիվ 60 լիցենզիայի վերախմբագրված և լրացված տարբերակի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարար Դ. Հարությունյանի կողմից ներկայացված տեղեկատվությունը.

բ) ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Ա. Մանուկյանին՝ մեկամսյա ժամկետում ՀՀ վարչապետին ներկայացնել 2,4 գեգահերց հաճախականության տիրույթի ազատականացման վերաբերյալ առաջարկություն:

3. «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ, Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթաժողովի մրցանակաբաշխության հայաստանի պատասխանատու Գ. Չուգասզյանին՝ մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնել Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված էլեկտրոնային բովանդակության համահայկական մրցույթի անցկացման աշխատանքային ծրագիրը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2004 թվականի նոյեմբերի 1-ի «Հոբելյանական հանձնաժողովներ ստեղծելու մասին» N 710-Ա որոշմամբ ստեղծված հայոց գրերի գյուտի 1600-ամյակի նշումը նախապատրաստող հոբելյանական հանձնաժողովի կողմից մշակվող հոբելյանական միջոցառումների ծրագրում ընդգրկելու նպատակով:

4. Ընդունել ի գիտություն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի համակարգումն առաջնորդող մարմնի ստեղծման մասին տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի անդամների կողմից ներկայացված առաջարկությունները և շարունակել հարցի քննարկումը՝ առաջիկայում վերջնական որոշում կայացնելու նպատակով:

5.

ա) Շնորհակալություն հայտնել Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությանը և Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամին՝ «OpenOffice.org» ծրագրը ստեղծելու նախաձեռնության համար.

բ) ՀՀ գիտության և կրթության նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանին՝ համագործակցել Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության հետ՝ տարբեր ուսումնական հաստատություններում «OpenOffice.org» ծրագիրը փորձարկելու գործում.

գ) Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի գիտակրթական աշխատանքային խմբի ղեկավար Յու. Շուքուրյանին՝ աշխատանքային խմբում քննարկել

«OpenOffice.org» ծրագրի փորձարկումների արդյունքները և ներկայացնել առաջարկություն
ծրագրի կիրառման նպատակահարմարության վերաբերյալ:

Խորհրդի նախագահ,
ՀՀ վարչապետ

Մ Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ

Ա. Մարգարյան

Խորհրդի քարտուղար

Մ Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Գրիգորյան